



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< 30 >> << 07 >> 2020թ.

N 05/9/06834-202

**ԹԵՐԹ.am կայքի լրագրող
տիկին Արփինե Հախվերդյանին
Էլ. Փոստ Arpinehakverdyan94@gmail.com**

Հարգելի տիկին Հախվերդյան

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրած Ձեր հարցման տեղեկացվում է, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված արտագնա աշխատանքի չմեկնած քաղաքացիների հավաքագրման նպատակով մարզպետարանի կայքում /mtad.armavir.gov.am/ տեղադրված հայտարարությանը արձագանքել են 431 քաղաքացիներ, որոնք պատրաստակամություն են հայտնել կատարելու տարբեր շինարարական աշխատանքներ:

Հարկ ենք համարում նշել, որ մարզում իրականացվում է տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն 77 ծրագիր՝ 3,421.0 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Կառավարության պատվիրակմամբ մարզում իրականացվում է հինգ ճանապարհաշինական ծրագիր՝ 1,892,0 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների կողմից 2020թ. հունվարի 1-ից մինչ օրս տրվել է 272 շինարարության թույլտվություն:

Հավաքագրված անձանց վերաբերյալ մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից տեղեկացվել են մարզում գործող շինարարական կազմակերպությունները և նրանց առաջարկվել է, անհրաժեշտության դեպքում, նշված քաղաքացիներին ներգրավել շինարարական աշխատանքներում:

Արտագնա աշխատանքի չմեկնած անձանց թվաքանակի, աշխատանքային զբաղվածության կամ աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվություն մարզպետարանում չի հավաքագրվում:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի սահմանափակումների մարզպետարանը չի կարող տրամադրել վերոհիշյալ 431 անձանց տվյալները, սակայն դուք կարող եք համապատասխան հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտեից:

Հարգանքով՝

(Handwritten signature)

Ա. Հովհաննիսյան

Կատ՝ Հ. Հարությունյան

Հեռ. 0237/2-42-39/